ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ mayor@yerevan.am

N 01/3868005-ռ

«15» 07 2020 թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ջանջուղազյան,

Ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 8-ի թիվ 02/06.5/32994-2020 գրության, կից Ձեզ եմ ներկայացնում «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ԵՆԲ) միջև 2017թ.-ի դեպտեմբերի 1-ին կնքված E5P դրամաշնորհային համաձայնագրի (այսուհետ՝ Դրամաշնորհային համաձայնագիր) վերջնաժամկետի երկարաձգման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը:

Հարգանքով՝

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատ.՝ Ն.Մարտիրոսյան
Հեռ.՝ 52-09-73

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏ N 27628
4 «16» 07 2020

Տեղեկանք/հիմնավորում

Վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի կնքումից հետո, Երևանի քաղաքապետարանը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ՎԶԵԲ) և ԵՆԲ-ի խորհրդատուների աջակցությամբ, սկսեց մշակել նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրերի փակման կոնցեպտուալ նախագիծը և մրցութային փաթեթը:

Աշխատանքը բավականին բարդ էր, հաշվի առնելով, որ (i) Երևան քաղաքում չկար եվրոպական չափանիշներով նախագծված և կառուցված աղբավայր և համապատասխան մասնագիտական փորձ, (ii) ԵՆԲ խորհրդատուն աշխատում էր աղբավայրերի փակման կոնցեպտի մշակման, իսկ ՎԶԵԲ խորհրդատուն՝ նոր աղբավայրի կառուցման կոնցեպտի մշակման ուղղությամբ, ուստի անհրաժեշտ էր համախմբել և այս երկուսի հիման վրա պատրաստել մեկ ընդհանուր մրցութային փաթեթ, (iii) ՎԶԵԲ խորհրդատուի կողմից մատուցվող ծառայությունների որակը չէր համապատասխանում անհրաժեշտ չափորոշիչներին, ինչի արդյունքում վերջինիս հետ կնքված պայմանագիրը լուծվեց, որն էլ ավելի դժվարեցրեց փաթեթի պատրաստման գործընթացը:

Փաթեթի վերջնական տարբերակն այնուհետև ուղարկվեց ՎԶԵԲ-ի և ԵՆԲ-ի հաստատմանը: Մրցութային փաթեթը ենթարկվեց բազմաթիվ փոփոխությունների և լրացումների, ինչի արդյունքում, մոտ մեկ տարի հետո հաստատվեց:

ՎԶԵԲ և ԵՆԲ հաստատումներից հետո մրցութային փաթեթը ներկայացվեց ՀՀ կառավարություն՝ ստանալու հավանություն մրցութային գործընթացը սկսելու համար:

Մրցույթն ինքնին բարդ է, հաշվի առնելով, որ պայմանագիրը նախատեսված է նախագծում-կառուցում-շահագործում ձևաչափ, ուստի մի շարք հայտատուների խնդրանքով, հայտերի ներկայացման ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է:

Մրցութային հայտերի ստացումից առաջ, ՎԶԵԲ-ի հետ համաձայնություն էր ձեռք բերվել ներգրավելու նոր խորհրդատու՝ ՎԶԵԲ տեխնիկական աջակցության (դրամաշնորհային) հաշվին: Նախատեսվում էր, որ խորհրդատու ընկերությունը պետք է մոբիլիզացվի մրցութային հայտերի ստացման փուլում, սակայն դրամաշնորհային

միջոցների հատկացման և հաստատման գործընթացի երկարաձգմամբ պայմանավորված, խորհրդատու ընկերության հետ պայմանագիրը կնքվեց 2019 թ. հոկտեմբերի վերջին, և խորհրդատուն մոբիլիզացվեց նոյեմբերին:

Նոյեմբեր ամսից մեկնարկեցին մրցույթի առաջին փուլի հայտերի գնահատումը, ինչը, պայմանավորված հայտերի քանակով և ծավալով, ավարտվեց 2020 թ. ապրիլին: Գնահատման գործընթացում որոշ ուշացումներ պայմանավորված են նաև COVID-19 համաճարակի բռնկմամբ, որի արդյունքում խորհրդատու ընկերությունը (Գերմանական) տեղաշարժման խնդիրներ ունեցավ:

Հաշվի առնելով մեր կանխատեսումները, որ նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրերի փակման շինարարական աշխատանքները կմեկնարկեն 2021թ.-ին և կտևեն մոտ երկու տարի, որին կհաջորդեն թերությունների վերացման աշխատանքները, Երևանի քաղաքապետարանը առաջարկվող վերջնաժամկետների հետ կապված առարկություններ և դիտողություններ չունի: